



65. ԽԱՐԴԱԽ ԴՐԿԵՑ

Ժամանակով գրկեց մե ուր դրկեցին արծըթով լիք սնդուկ մի պահ կիտա, ինք կէրթա: Վախտ մե գընցնա՝ սնդկի տեր կը դառնա դիկա, դրկեցին կըսե.

— Ա՛խպեր, դիմ սնդուկ տուր:

Դրկեց կը բերե զսնդուկ՝ կը դնե գրկեցի յառեջ, կըսե.

— Իշկե, հա՛, կողպեզ վրեն կախուկ է, իմալ տվեր իս՝ հմալ չես կը դարձում:

Դրկեց կառնե զսնդուկ կը տանե տուն, կը բացե, կը տեսնու ի՛նչ, արծըթի տեղ էրկթի կտորտանք է լցուկ: Մարդ շախիշ կէնե, օր խարդախ ուրին խաբեր է, շատ կը մտածե՝ ի՛մալ զարծաթ չես առնե, գիկա գրկեցի տուն, կը տեսնա՝ հանդե տանտիրոջ իրեք տարեկան տղեն տոճիկ կիտա մըջ տան, կը կանչե ուր մոտ, խաբլու-թենով կը տանե ուր տուն, տեղ մե կը պահե: Տան վերի դեն հորթիկ մե կապուկ կէղնի: Խարդախ դրկեց գիկա տուն՝ կը տեսնա թե տղեն դրեր իս՝ արի տես, չեսու կը կուահե, օր դրկեցն է: տարի ուր տղեն, կէրթա մոտ:

— Իմ էրեխին դո՛ւ իս գողցի, բերի, չո՛ւր է:

Դրկեց կըսե.

— Հա՛, վո՛ւա, ես իմ գողցի բերի, մինակ թե մե՛ծ խաղաբ էկավ գլխուն, դարձավ հորթիկ:

— Ի՛մալ հորթիկ, — կը զարմանա գրկեց, — ո՞ն է տեսի ու լսի, օր աղամորդին հորթիկ դառնա:

— Է՛, դրկեց ախպեր, արծաթ կոնա էրկըթի կտորտանք դառ-
նա, էրեխեն չը կոնա՛ դառնա հորթիկ:

Խարդախ դրկեց ամոթուց կը կարմրի, կէրթա զարծըթի սնդուկ
կը բերե, կիտա տիրոջ, տղին կը տանե տուն:

